

# ԲԱԿԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

( Տես Բազմավէպ 1919 էջ 977 )

## Ճագարի օգտակարութիւնը

Թէ՛ն է ճագարն իւր վայրի վիճակին մէջ կրնայ այնպիսի մեծ ֆիսաններ պատճառել, բայց ընտանին ալ իւր բեղջիւաւորութեամբ մեծ օգուտ և շահ կ'արտադրէ:

Ան կու տայ միս, մորթ և մազ. իբրև մսի արտադրիչ՝ կը անուցանէ զմարդս, մասնաւորապէս միջակ և աղքատ դասակարգը, որ կրնայ լաւ օգտուիլ այս ամե նասննդարար նիւթէս, որուն գինը՝ ուրիշ տեսակ միսերու համեմատութեամբ՝ շատ չափաւոր է, և միանգամայն ունի աննդար կարողութիւնը ճիշտ միւսներուն չափ, որոնք յաճախ կրնան անմատչելի ըլլալ ամէն քսակի, իբրև կաշիի և մազի արտադրիչ, շատ ճահաւոր արուեստի մը դուռ կը բանայ ճագարի մորթը. թէ՛ մուշտակեղէնի և թէ՛ հիւսուածեղինաց գործածուելով, որով թէ մարզոց և թէ կանանց զխարկներ կը շինեն. և նոյն իսկ այս վերջին գեղարուեստին համար միայն, շատ դիւրին է ապացուցանել ճագարաբուծութեան օգտակարութիւնը, մտածելով որ ամէն տարի միլիոններով զուտ ոսկի դրամ կ'արտածուի այն երկիրներէ՛ն որոնք զուրկ են ճագարներէ, և կ'երթայ կը լեցնեն է այն երկրին գանձը ուր՝ ճագարաբուծութիւնը ընդհանրացած է:

Ճագարաբուծութիւնը ո՛չ էլի է միայն ճարտարարուեստին կը նպաստէ այլ զարգացում կու տայ ուրիշ ճարտարարուեստներու ալ և շատ մը գործաւորաց ալ գործ և աշխատութիւն կը հայթայթէ: Ճագարաբուծութեան հետ առնչութիւն ունեցող արուեստներն են՝ զխարկագործութիւն կամ խոյրարարութիւն, մուշտակագործութիւն, կաշեգործութիւն, ներկարարութիւն, թաղեգործութիւն և ոտայնանկութիւն:

Ամենամեծ խնդրանքը որ կայ բոլոր քաղաքակիրթ աշխարհին մէջ, է կաշին և մուշտակը, որպէս զի նորոյթի քմահաճոյքը կատարուի: Այժմ ծնունդ առած է

ու Եկեղեցին Պետութենէն պէտք է բաժնեկէ կ'ըսէ, բարենորոգում մտցնելու դիտարութեամբ: Ինչու մենք դեռ հաստատուն Պետութիւն չունինք: Երիտասարդ Հայաստանի արձագանգն է առ՝ որ մարտին առաջ կ'ազդարակէր արիւնտտ Հայաստանի երեսն ի վեր, ըսելով, թէ՛ « մենք արդէն տար տարիէ ի վեր Պետութիւնը Եկեղեցին բաժնէր ենք », կարծես մեր մարտիրոսները հեգնել ուզելով: Ասոնք են մեր խումբ մը նորասէր գաղափարապաշտներու սկզբունքներ որոցմով իբր թէ մեր Ազգին շուտափոյթ վերածնունդը պիտի կերտուի. սակայն Հայ ժողովուրդը նախընտրած է միշտ քան ո՛ն է ուրիշ նորոյթ, համերաշխ ապրիլ ու յառաջադիմել իր սրբանունէր կրօնով ու Եկեղեցիով: Մերուսմաններ, Հայր Մարգարէներ փորձեցին հեթանոս սկզբունքներով ծաղկեցնել Հայաստանը ու կործանեցին: Մեծն Վարդան, Վահան, Մուշեղ Մամիկոնեաններ Եկեղեցիով ու իրենց կրօնասիրութեամբ մեծ եղան: Աւ մեր քաղաքական մեծ բարեկարգութիւնը և զբաղանական ոսկերչարը, Ի. և Ե. դարերուն՝ ունեցանք Եկեղեցույ և Տէրութեան համաշունչ գործակցութեամբը:

Հուսկ՝ փիւնիկի խմբագրութիւնը եզրակացութիւն մը պիտի ուզէ և առ պիտի ըլլայ իր գրական յաղթանակը՝ իր կեանքին երորդ տարուան սեմին վրայ: Իր քաջակերանքը արդէն իսկ իր գրողներն են և իր առաջինն է վերջին թիւերուն մէջ զետափ գրագէտներուն մեծ գրագետով շատ զգալի է, և իր դիրքին ու նպատակին ձկտելու գրական-գեղարուեստական ճշմարիտ ամսագրութիւն է. ունի յախարհաբար յստակութիւն, լեզուական ճոխ մթերք. հոծ է զբախուսական կենսագրութիւններով ու մարդ յետին թիւը կարգուէ վերջ՝ անհամբեր կ'ակնկալէ միսին: Ան, արդէն շատ մը թերթեր գլեց անցաւ: Խմբագրութիւնը կը խոստանայ կիսամսեայ ընել բայց պիտի փափագէի որ փիւնիկ ամսագրութիւնը մնար, օրինակ ունենալով առջնին փարիզի վերածնունդ ամսագրութիւն, մտիտ շաբաթագրութիւնը...: Փիւնիկ մեր գրականութեան հորիզոնին վրայ նորածագ ստող մըն է, իր գեղատենչ նրբերանգը աւելի ևս կը գեղարմին ճայ փառքը: Բան մըն ալ որ հեշտ պիտի ըլլար մեզի՝ գործի միջավայրը զուտ մայրենի հողին վրայ տեսնալն էր, ասպնջակախիլ հոն՝ ուր Քնդն ու Երկիրը տարբեր դաշնաւորութիւն մ'ունին մեր զգացումներուն հետ, ուր իրերը բոլոր Ազգին թակկացնող ու բորբոքող շեշտն ունին, ու այն առնաւելի սրտազրաւ պիտի ըլլար որպէ՛ս փիւնիկի իրապաշտութիւնը:

Հ. Ա. ՏԵՕԼԵՆ

### ԿԸՂԱՆԳԻՆՅՈՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊԻ մեր մաղթանքները գումար՝ Չորս ամէ ամ՝ շնորհաւորքը ենք քայտօր, կրկնապատկած բիւրիցս անգամ ցաղցրալար, Թող գայ տիրէ Հայոց բախտին Լիազօր:

Հ. ԳՐՍ. Ա.